Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

18372

Էմին Աներ Ջիրջիրյան
եւ Չարեն ինչ
կամ
Երկու սիրահար
Կ. 1879

891.99
S-38

1370

26

~~733~~
~~839~~

# ԷԼ ՁԱՐԷՍ ԻՆՁ

ԿԱՄ

# ԵՐԿՈՒ ՍԻՐԱՀԱՐ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

ՄԻ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ։

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ

ԷՄԻՆ ՏԷՐ ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ

1879

Ի տպարանի Զաքարիայ Գէորգեան և ընկ.

ԵՐԵՒԱՆ

891.992
Տ-38

# ԷԼ ՉԱՐԷՍ ԻՆՁ

ԿԱՄ

# ԵՐԿՈՒ ՍԻՐԱՀԱՐ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

ՄԻ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ:

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ

ԷՄԻՆ ՏԷՐ ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ

1879

Ի տպարանի Զաքարեայ Գէորգեան և ընկ.

ԵՐԵՒԱՆ

Дозволено Цензурою. 11 Марта 1879 г. Тифлисъ.

# ԷԼ ՉԱՐԷՍ ԻՆՁ

ԿԱՄ

# ԵՐԿՈՒ ՍԻՐԱՀԱՐ

ԵՐԵՒԱՆԱՅ ԹԱՏՐՈՆ. 27 ՅՈՒՆՎԱՐԻ 1879.

## ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ.

ՄԵԼՔՕ, հարուստ վաճառական, ծերունի.
ԽՈՐԻՇԱՆ, նորա կինը:
ՇՈՒՇԱՆ, նոցա աղջիկը, ինստիտուտում կրթուած:
ՆԻԿՕԼ, նորա սիրեկանը, գիմնազիայից աւարտած:
ԲԺԻՇԿ:

Անցքը պատահած է Տփխիսում:



ԷԼ ՉԱՐԷՍ ԻՆՁ

ԿԱՄ

# ԵՐԿՈՒ ՄԻՐԱՀԱՐ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ՄԻ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ:

*Տեսարանը ներկայացնում է Մելքօյի պարտէզը: Աջ կողմում երևում է նորա փողոցի վերայ նայող տունը: Խորքի պատը բաժանում է պարտէզը փողոցից:*

## ՏԵՍԻԼ Ա.

ՆԻԿՕԼ, *ձախ կողմից ծածուկ գալով:*

Այստեղ չէ՛ . . . այստեղ չէ սիրուհիս . . . (Լսում է և նայում): Ա՜խ իմ ծնողք, ի՞նչ կլինէր, որ դուք մի քանի շահի յետ գցած

լինէիք ինձ համար, որ այս օրուայ օրը՝ ես խեղճ՝ չմնայի այս անշնորհ ծերունու ձեռքին, որ իմ այս անմահս, այս նազելիս չթողնէր ձեռքիցս . . . Ա՜խ, մինչև ե՞րբ ես պիտի այրուեմ ու մաշուեմ . . . (Լռութիւն): Այժմ դեռ ոչինչ . . . . իսկ այս քաւթառքոսին, որ ոչ հալ կայ ջանումը, ոչ խելք կայ գլխումը, ոչ ուժ կայ ոտներումը, ոչ էլ մի մարդկութեան շնորք կայ վերան, հէնց կենումէ կենում ու ասում «Նրա պէս սովածին ախչիկ չեմ տա, չէ,,: Մէկ էլ լսեմ, որ ուզումէ իր այս պատուական աղջկան, այս անման հրեշտակին, տանի տայ են գանդրումանենց աղայ կակուլուն, ի՞նչ է. մի երկու երեք շահի փող ունէ . . . (Գլխին խփելով) վա՜յ գլուխս, մեռնես ու այս տեսակ բան չտեսնես:—(Դէպի լուսամուտը): Ա՜խ, Շուշանիկս, մի նայի՛ր լուսամուտից է՞, քու քաղցր ժպիտդ գոնէ մի րոպէ ես ինձ ընծայիր . . . Մի՞թէ չգիտես, որ իմ երջանկութիւնս կախուած է քո քաղցր ժպիտից . . . Մի՞թէ չգիտես, որ ես այստեղ եմ, սպասումեմ տեսութեանդ . . . Ախ գիտեմ, գիտեմ սիրուհիս, ըսպասումես իմ ձայնիս, իմ երգիս . . . ես պատ-



րաստ եմ քեզ համար: (Երգումէ հետևեալը շատ մեղմ ձայնով*):

Սիրուհի, քեզ համար կեանքս կէս էլաւ,
Քո անունդ էր միայն, որ ինձ կեանք տուաւ:

Հալւումեմ, մաշւումեմ, ես այստեղ անճար,
Այրւումեմ ու այրւում, եկած քեզ համար:

Ախ գթա՛, մէկ ժպտա՛, դու իմ աղաւնիս,
Մէկ նայիր դու ինձի, տես սիրտս ու հոգիս:

Բայց ո՞ւր ես, չեմ տեսնում քեզ, իմ մանուշակ,
Քո ձայնդ չեմ լսում, երկնային հրեշտակ:

Երևի՛ր, յայտնուի՛ր, սիրուհի, ո՞ւր ես,
Ես այստեղ, շատ վաղուց, սպասումեմ քեզ:

ՇՈՒՇԱՆ, կողքի տանից երգով պատասխանումէ:

Նստի իմ լսիր . . . ! **)

ՆԻԿՕԼ:

Ա՜հ, այս նորա ձայնն է, որ տագնապէս միջից ինձ դուրս կքաշի . . .

(Ականջը դարձնումէ այն կողմը, որից լսւումէ ձայնը. ուշի ուշով ականջ դնելով երգին, յայտնումէ իր սրտի զգացմունքը

---

(*) Այս երգը [illegible]

(**) Ս[illegible]

*թէ շարժմունքով, թէ երկար ձգացրած դծագրութիւններով և թէ ժամանակ առ ժամանակ թառաչներ հանելով սրտի խորքերից և ցոյց է տալիս, որ նորա երգը մեծ տպաւորութիւն է գործում իւր վերայ)։*

ՇՈՒՇԱՆ, *կուլիսի ետևից։*

. . . քու քաղցր ձէնը,
Վարդ կորցրած բլբուլի խաղումիս դիրը։
Ախ, ափսոս, չիմ կանա, վուր գամ քիզ տեսնիմ,
Իմ սիրով վառ սրտիս, փափագը առնիմ։

ՆԻԿՕԼ, *սէրը վառուած։*

Մանուշակ, նունուֆար, վարդ ու դիօրգին,
Ոչինչ են առաջիդ, սիրուհի անգին։
Քաղցրախօս սոխակը . . .

## ՏԵՍԻԼ Բ.

ՇՈՒՇԱՆ ԵՒ ՆԻԿՕԼ։

ՇՈՒՇԱՆ, *շտապաւ ներս է մտնում աջ կողմից։*

Նիկօլ ջան, փախի, դէդէն իմ եկիցը*) բան

---

իւր խօսելու ժամանակ։ Շուշանը նայում է "Նաւի իմ լսեցի", երբ էլ ու դադարէ մինչև Նիկօլէ առաջադէն, այլ դեռ է շարունակե առանց նրան ատելու, ասել և թէ Շուշանը նույնիսկ [illegible] է եր-գում, իսկ Նիկօլը նորա ձայնը լսելու [illegible] դաշտում [illegible] իւր վերայ գործած տպաւորութիւնները, [illegible] մէջ։

(*) Պէտք է արտասանել [illegible]։



հասկացաւ ու, թէ ասիմ, քու ձէնն էլ իմա-ցաւ . . . մէկ էլ տեսար էկաւ . . . .

ՆԻԿՕԼ, *վառուած։*

Ախ, սիրուհիդ իմ, հրապուրիչդ իմ (դրկել) մի համբոյր, մի համբոյր . . .

*(կամենում է համբուրել, բայց այս միջոցին մայրը մի մոււթարայ ձեռին վրայրծնելով, կամենում է խփել Նիկօլին, բայց, որովհետև Նիկօլը իսկոյն կռանում է, մութաքէն անցնում է և կպչում ձախ կողմից ներս եկող Մելքօյին, որը փոքր է մընում, որ վայր ընկնի, բայց հազիւ բռնւում է։ Շուշանը փախչում է աջ)։*

## ՏԵՍԻԼ Գ.

ՄԵԼՔՕ, ԽՈՐԻՇԱՆ ԵՒ ՆԻԿՕԼ։

ՄԵԼՔՕ, *վախեցած և զարմացած։*

Վա՜, ի՞նչ խաբար է։ (Նկատում է Նիկօլին)։

ԽՈՐԻՇԱՆ, *խոկոյն։*

Նիկօլը, քա, Նիկօլը . . . . . .

ՄԵԼՔՕ, *շտապաւ։*

Տօ բռնէ՛, բռնէ՛։

*(Սա և կինը վրայեն գալիս, որ բռնեն։ Նիկօլը, չկարողանալով փախչել, մնում է երկուցանց մէջ տեղ, բայց, նկատելով, որ արդէն բռնւում է, իսկոյն կռանում է և նոցա միջից մեծ ճարպկութեամբ դուրս թռչում և փախչում, դոյն խակ միջոցին Մելքօն և Խորիշանն էլ են կռանում, որ բռնեն նորան, բայց նոր արգելք, երկուցանց գլուխները սաստիկ կպչաւեն իրար)։*

## ՏԵՍԻԼ Դ.

ԽՈՐԻՇԱՆ ԵՒ ՄԵԼՔՕ։

ԽՈՐԻՇԱՆ, չանչելով։

Վա՜յ փեթխայինն անի քու դատաստանը, Նի՛կօլ։ (Գլուխը բռնած, հարբածի պէս, ձախ դուռն։ Գնում է։)

## ՏԵՍԻԼ Ե.

ՄԵԼՔՕ, միայն, սաստիկ շշմած։

Գլուխս, ուֆ գլուխս, ուֆ, ուֆ, ուֆ... խիղճ Խորիշան, էս հանգի վուր իմ գլուխն է տրաքում, բաս քու... վա՜յ մէ, վա՜յ մէ, դէդի, վա՜յ մէ՜... (Վախեցած ճակատը սրբելով ձեռքով) Տօ, էս ալին է՞, վուր էսէնց երեսովս դէմէր է գալի՞... (Հանդարտելով) չէ, տօ, քրտինք է քըր-տինք... միթամ ինչ ալմնալու բա՞ն է ալի-նը... ուֆ... ուֆ ուֆ... էն հանգի վուր գլխինիս կպան հա, թէկուզ թօփի գուլլէք ըլէին կուզկինանոյին վուր... Վա՜, էս ի՞նչ է, գլուխըս էնէնց է պտուտ գալի, կօսես հինդ թունգի գինի ըլիմ կանծած... Ըոմ... (Ներս է հառաչանում։) Էս էնդուրմէն է... (Հարբածի պէս։) Վա՜, խելի վուտնիրիս վրայ էլ չիմ կանացի կանգնի ու... Վա՜յ քի, վա՜յ քի, Խորի-



շան... իս *) վուր էս հանգի իմ, բաս դո՞ւն ինչ հալըում պիտիս ըլի... Մէ գնամ տեսնիմ, չը-լի՞ մէ բաշ վուտնիրը մէգնած ըլի ու աչքիրը չռած... (Գնալով դէպի աջ։) Ինչ վուր էս գի-շեր մէ միխ էրազ էլ իմ տեսի։

## ՏԵՍԻԼ Զ.

ՇՈՒՇԱՆ, ներս վազելով և ծիծաղելով, աջ կողմից։

Ա՜յ ցխն... խիղճ մամի ու դէդի (Նայելով չորս կողմը) ղուրթ մամէն խօմ էստի չէ դէմէր-նընգի... (Ծիծաղ։) չէ, նա էլ է գնացի պէպու մօտ... անջախ, անջախ դէդին իրէն պցից տուն... վա՜յ Նիկօլ, էսէնց էլ փանդրաղութի՞ն... մուլթաքէն, վուր գլխումը պիտի անուշ անէր, մամիս ուտեցրից, վուր պիտի մամիս ու դէդիս ճանդը ննգնէր ու մէ լաւ գնքուէր, էնէնց արաւ, վուր խելի նրանք էլ ուրանի չէլան... (Ծիծաղ։) Դէ ալի ու էսթաւուր աղէն մի սիրի, դէ ալի ու էս թաւուր աղէն մաքէմէդ քցի... տուի... (Վճռողաբար։) Չէ, իս հոգով ու մարմնով նը-րանն իմ ու նրանը...

---

(*) Այս հատուածի խօսքը, որ ցոյց է տալիս առաջին [illegible] պէտք է ասէ իր հետ և [illegible], որ լսէ Նիկօ:

## ՏԵՍԻԼ Է.

ՇՈՒՇԱՆ ԵՒ ՄԵԼՔՕ:

ՄԵԼՔՕ, *վերջի խօսքերը լսելով և ներս գալով աջ կողմից:*

*Էդ ումնից, ումը . . .*

ՇՈՒՇԱՆ, *վախեցած:*

*Վա՜յ մե:*

ՄԵԼՔՕ.

*Չէ, մէ սաս թէ Աստուած կու սիրիս:*

ՇՈՒՇԱՆ.

*Ախար ի՞նչ ասիմ:*

ՄԵԼՔՕ.

*Դուն էդ ումնից հոգով ու մարմնով:*

ՇՈՒՇԱՆ, *խորագիտութեամբ:*

*Վա՜, բաս չի՞ս իմանում:*

ՄԵԼՔՕ.

*Չէ:*

ՇՈՒՇԱՆ.

*Ո՞ւմը պիտիմ, բաս ձիրը չի՞մ:*

ՄԵԼՔՕ.

*Ա՛յ բա՜ն: Չէ, նուր վուր ասիր «նրաննիմ ու նրանը,, էդ ո՞ւմ համա էիր ասում:*



ՇՈՒՇԱՆ, *նկատելով, որ չյաջողեց իւր խորագիտութիւնը, կարմրում է, խելոյն վերցնում մութաքէն և գնալով դէպի աջ:*

*Է՜ է՜ է: . . շատիս բանի յիմնէմէն նընդնում:*

ՄԵԼՔՕ, *ետևից:*

*Վա՜, բան իմ հարցնում . . . է է է՜ . . . յ:*

## ՏԵՍԻԼ Ը.

ՇՈՒՇԱՆ, *կուլիսի ետևից:*

*Դէդէն կանչում է:*

ՄԵԼՔՕ, *բարկացած:*

*Վա՜, էստի արի, ասումիմ է:*

ՇՈՒՇԱՆ, *կուլիսի ետևից և իրր հեռուից:*

*Բանս վրայն է:*

ՄԵԼՔՕ, *չարացած:*

*Տօ, էսէնց էլ բան կը՞ ասեն . . . հիմիկուայ ախչկերանց յետ էլ չէ ըլում խօսել . . . խօսկէդ ստատախանն էլ չեն ուզում տալ . . . Տէր օղորմած Աստուած . . . (Մտիկ քայլեր) Ըրմ . . . իս իմացայ, գլխի ինկայ . . . տօ, սա էլէ նրան սիրում, էն չոլթուքասան շալլատանին . . . թէ վուր չէ սիրում, բաս նրա յետ ինչ բան է ունեցի էստի*

...(Մտածում է։) Վո՜յ վո՜յ վո՜յ վո՜յ, ղուրթ Խորիշանը ասումէր թէ քիչ էր մնացել, վուր պոշ էր մրի ...ըրմ... թուլամէ ինչ բան է էլել... Տօ, ղուրթ հէնց էսու համա էր վուր մուրթաքէն բոյերբը ջանումս նստեցաւ է...

## ՏԵՍԻԼ Թ.

ՄԵԼՔՕ ԵՒ ԽՈՐԻՇԱՆ։

ԽՈՐԻՇԱՆ, *ներս գալով աջ կողմից։*

Ղուրթ, ա՜ մարթ, ախար մէ սաս տանիմ, ի՞նչ պիտի ըլի մի ախչկայ ձարը, թէ վուր էգուցւմէտ մէ ճար չանիս, հէնց իմացի վուր ջուրն էկիլ է ու միզ տարի։

ՄԵԼՔՕ, *ծաղրելով։*

Ահա հա հա, ջուրն էկիլ է ու միզ տարի, ախար ինչի՞ է տարի, ումնիցնիմ փախենում, իս գլուխս ու իմ ախչիկը։

ԽՈՐԻՇԱՆ։

Ախար էս Նիկօլը շատ է գնում գալի, ու էս թասուր անհամութինիր անում, էս մի կապ կոլածի համա։

ՄԵԼՔՕ։

Բէհէնար նամազուլ է անում։



ԽՈՐԻՇԱՆ։

Թէ ասիմ, Շուշանն էլ է նրանի ուզում։

ՄԵԼՔՕ, *չարացած։*

Նա էլ նրա հիդն է բէհէնար նամազուլ անում։ ... Տօ, ի՞նչ իս ասում. Դանդրումաննեց կաչալու մէ ձիթը՝ կու փախիմ իս ապր փուտով ու գլխով ասում՝ ասած Նիկօլի հիդ։ (Դուշրէշում)։ Ըսպասում ասած իմ, կօսէ, զինմանը վեր կլանիմէն դուս էկած իմ, կօսէ։ Թէ վուր ասում ասած իս, քու աշխատանքը վո՞րն է, չիմ սեկնում. չուրս հինգ դուքնիրը ապրանքիմէն զերկմբումին ա՞յ, ան թէ չէ մուշտարուն ձեռնիմէն քիսիքի մէջ ծլծլումէ ա՞յ...։ Գնա՛, գնա գլխումէս ռադ իլ. իս քիմէն էսունք ուփրո շատ իմ հասկանում։ (Ցույց տալով։) Տեսնումիս էս տուն ու տեղն ու քալսիէն, ըլի իս իմ աշխատիլ, ըլի իս իմ քրտինք ու խիլք թափիլ սրանց վրայ։

ԽՈՐԻՇԱՆ, *չարանալով։*

Քա՛, էլի դուն էրգումայրի՞ր... Մաշ իս մէր չի՞մ, մաշ իս իմ ախչկայ վրայ էլ իրաւունք չունի՞մ... Հէնց էրկու գլուխն էլ քու ձեռնիս վիկալել ու իժո՞ւմ... Ախար դու մէ քու չուրս կողմն էլ մտիկ արա, տես խալխը վունց

է էդ հանգի բանումը ժամ գալի, էնէնց էլ
դուն ժամ արի էլ՞. . .

ՄԵԼՔՕ:

Տօ, ի՞նչ ես բարաթում. . . Ո՞ւմ վրայ ես բարաթում. . . Չէ, մէ ասա տեսնիմ. քաղքի տղերքանց դուն ես լաւ ճանչնում թէ ես, դուն ես ամէն օր նրանց հիդ նստում վեկենում, թէ ես, դուն ես նրանց չարն ու բարին իմանում թէ ես. . . Լաւ, էդ էլ ղըրաղ դնինք։ (Ցոյց տալով Խորիշանին ու ձեռքը) Էս սաղ տուն տնուդն ու սրահուդը ո՞վ է . . . ձիդ գլխուննանցդ սարքյուդն ո՞վ է . . . էս տան փող պլտուդն ո՞վ է։ (փողերն մի առանձին ծրարով ցոյց տալով։) Փուղ իմ տանում, փո՞ղ . . . փուղ, վուր աշխարքի կէսք տուդն է, աշխարքի արեգնուդն է, էն վէրջի նոքրից բռնած մինչեւ էն մինձիրը՝ նրա համա են գլխի չարչրվում ու տանջւում. . . ու հիմի դուն ուզում ես, ինձ հիդ բարաբար վուր մէկնէս։ Չէ, չես հանում սարծես, գնա մէ երկու իրեք*) շահի էլ դուն տուն բե, օրօրց քու հալալ քրտնքով աշխատած բես, ու իժում ար մինձ մինձ ձեւէ ու կարէ։

(*) Պէտք արտասանել իրեք։

4007
36358



ԽՈՐԻՇԱՆ, նեղացած:

Է՞լա՛ւ, ես հիմ։ (Մեղմ կողմն։) Փառք քեզ Աստուա՛, վուր ես իմ աչքիս համա էլ չիմ կանացի մէ երկու խօսք խօսիմ։ (Մէջտեղին։) Հիմի դուն համաստ ուզում ես՝ Կակուլուն տաս էլի աղջիկդ։

ՄԵԼՔՕ:

Համաստ։

ԽՈՐԻՇԱՆ:

Բաս մէ չի՞ բլի, վուր Շուշանի կամքն էլ հարցնես . . . ախար ինչքիդ զոռում ես ի՞նչ, տեսնում ես, վուր . . .

ՄԵԼՔՕ:

Չի՞ բլի չէ՛ . . . ինչո՞վ չիմացար . . . Չէ ու չէ . . . Ես իմ գիտեցածը կանիմ։ Վուչ դուն ես էտունք հասկանում, վուչ էլ քու աղջիկը . . . նա, վուր իր խելնուշտաը բլի հասկանում, Կակուլու պէս ղոչաղ ու հարուստ տղին կութողնէ ու էն թաւուր ասված շալլատանի հիդ կուննդնէ՞ . . . Ես քիչ քանի չէր ասիլ իմ ու հիմի էլ իմ ասում, դուն կոտրած քթալի դայդայ մի խասնուի իմ գուրծքի մէչ, դուն էն վուխտ ուրախացի, վուր բանը վերչացած կու-

տեսնիս։ Էլ ախչկայ կամքը վճռած է . . . Նրա կամքն էլ էն պիտի լինի, ինչ վուր իմն է։

ԽՈՐԻՇԱՆ, նեղացած և չարացած։

Է՛հ, թէ վուր էսենց է, հենց վունց գուզես արա . . . վունցոր անես էլ՝ ես իմ ախչկան կու օրհնեմ, ամա մեղքն ու վարձքը քէզ. Դէ հիմի դուն գիտես։ (Գնում է դէպի աջ։)

## ՏԵՍԻԼ Ժ.

ՄԵԼՔՕ, միայն, հետոյ։

Հալումաթաս վուր ես գիտեմ։ (Հառաչելով։) Նիկոլայմամի խելք էլի, ձեռաց կակղել է։ (Մտածում է գլուխը և ծածում։) Ամա թէ պրուստն ասիս, կակղելու բան էլէ է՞. ջէհիլ ախչիկ, ջէհիլ տղայ, երկուսն միթամ՝ ուսում առած, վունցոր լինի, է՛լի մէ իրար կու տեսնին . . . Չէ՛, շատ փիս է արել էն Նիկոլը մէր բաղչի դուռն ու քուչէն ու պատուհանը . . . դրանքն փիս բաներ դուս գուքայ . . . Ինչ անպատութեան, վուր դուս չգայ է՞, մեղ արմաղանն էն է։ Չէ, էս երկու օրը ես տանեմէն վուսա դուս չեմ գնի, ան թէ չէ վուր գնիմ էլ, ուշադրութիւն տան վուրայ պիտիմ ունենամ։ (Մտածում է։) Հա՛, դուրըթ մէ գնամ . . . (Գնում է դէպի ձախ)։



## ՏԵՍԻԼ ԺԱ.

ՇՈՒՇԱՆ, միայն, ներս գալով աջ կողմից տնից։

Մամէս էլ գնաց, ամա խիստ էր շտապում . . . գիտեմ, ինչ վուր է՝ էլի ինձ ամա կուլի . . . կուլի . . . (Մտածում է։) Ա՛խ Աստուած, ախ Աստուած, էս էլ օր է, վուր քաշումի՞մ, էս էլ կինք է, վուր ապրումի՞մ . . . զոռով ուզումին սիրել տան ինձ նրան, վուրին ես վուչ մի վուխտ չեմ կարող սիրի, նշնին նրա հիդ, վուրին ես իմ հօգահանս պիտիմ գիտենա . . . (Մէջոյ։) Հարուստ է, կօսէ, փուղ շատ ունէ, կօսէ, լաւ անիր ունէ, լաւ առուտուր ունէ, նրամէն լաւն ու ղօչաղը չիս գանի, կօսէ . . . Ախար ես ի՞նչ անիմ նրա փուղը, վուր մէ մարթութի՛ն չունէ, ես ի՞նչ անիմ նրա հարստութինը, վուր կի՛նք չունէ, ի՞նչ անիմ նրա առուտուրը, վուր ուսում չունէ, ի՞նչ անիմ ես նրա անիրը, վուր ես նրա մէջ բայղուշ պիտիմ դառնայ . . . (Մէջոյ։) Ախար ես վունց ուզիմ կակուղլուն ու թողնիմ Նիկոլին, ես նրա վո՞ւր մէ բանը մոռանամ, նրա ուսումը, նրա խիլքը, նրա ժաժ գալը, քաղքաւարութինը, մարթութինը, շնուրքը, իրգիրը . . . վո՞ւր մէկը, վո՞ւր։ (Մտածելով և վճռողաբար։) Չէ, չէ, ես նրաննիմ ու նա էլ իմն է.

. . Ամէն բան վերջ կառնիմ ու ես իմ գլուխ-ցաւս կտնիմ։ Ա՛ն Նիկոլը, ան գիրկըմըն . . .

(Անցնում է մի փոքր միջոց։ Շուշանը մօտ է գալիս տխուր և սրտի խորքերից թառաչ հանելով երգում է հետևեալ երգը Подъ вечеръ осенью ненастной *) երգի եղանակով։

Քանդուի աշխըրքի էս ադաթը,
Վուր նըշնէլէս հարցնում չէն.
Գուղի՞ս թէ չէ, առնի՛լ էս մարթը,
Ան ո՞վ է սիրուած քու սրտին։
Ծնուղքի քէփը վունց է ուզում,
Չէնց էնէնց էլ պիտի ըլի,
Ամա մէ վիրջը չեն մտածում,
Իրանց ախչկայ հիդ ի՞նչ կուլի . . .

## ՏԵՍԻԼ ԺԲ.

(Երևում է Նիկոլը ձախ կողմից։ Շուշանը չէ նկատում։ Նիկոլը խմանալով, որ նա երգում է, մի փոքր հեռանում է, ծառանկար կուլիսի տակ կանգնում է և լսում է իր սիրուհու երգը։ Նորա երեսից, նորա շարժմունքից պարզ արտայայտւում է իր վառուած սրտի զգացմունքը. սէրը, և իր վերայ գործած տպաւորութիւնները)։

Բանը բանէմէն անց կէնալէս,
Նոր նուրին դէս ու դէն նըշնում,
Ու նրա սիւցած օրը տեսնելէս,
Նրուած սրտով, "ա՜խ, վախ,, քաշում..

(*) [illegible]



Էսէնց իրանք գնումին հուղը
Ու բաժնվում վուրթուց քնքուշ,
Ա՜յ, հէնց էն վուխտ, ծնուղքի լացը՝
Աւիլնուրդէ ու խիստ շատ ուշ։

(Հոգոց է հանում)։

Ա՜խ, Նիկոլ ջան, վու՞րդի էս, մէ արի է՜ . . . մամէս հաղիր տանը չէ ու դէդէն էլ քընած է։

ՆԻԿՈԼ, առաջ գալով և հրապուրիչ ձևով։

Մամէդ տանը չէ,
Դէդէդ քնած է,
Նիկոլդ առաջիդ՝
Պատրաստ կանգնած է։

ՇՈՒՇԱՆ, ուրախացած։

Ա՛խ, Նիկոլ . . . (Գգւում են համբուրւում)։

ՆԻԿՈԼ։

Շուշանիկս, սիրուհիս, հոգիս, մինչև երբ պէտք է մենք այս օրերը քաշենք, մի՞թէ սոցա վերջ չպէտք է լինի։

[illegible]

ՇՈՒՇԱՆ, *հոգոց հանելով:*

Ը՛հը՜ . . . ինչ անեմ, Նիկոլ ջան, մամէս մէ իրասածի մարթ է. էսօր առաւօտէհան, հէնց դուղն ասաւ. Կանկուլին է, վուր կայ ասումէ, չէ՛ս իմանում խորիշան, թէ ինչ հանգի տղայ է, կօսէ: Ու մէկ էլ ասաւ վուր, իմաց իմ տուի, կօսէ, վուր կիրացի գան՝ նշան դնին: Ճար ունի՞ս՝ ճար արա, Նիկոլ ջան:

ՆԻԿՕԼ, *հանդիսականաց:*

Վա՛յ քու տղէս տղա՛յ: (Խնդրելով:) Շուշանիկս, մրկի ու դու համաձայնիր իմ ասած օյինիս. Աստուած, երկինք, գետինք վկայ է, որ մենք անպատճառ կհասնենք մեր նպատակին: Ես մինչև անգամ այս ձեր դրացի բժշկին ես կտանեմ և կհասկացնեմ նորան բանի էութիւնը և անպատճառ նա ինձ կլսի, իմ խօսքիցը չի անցնիլ, նա ինձ շատ է սիրում:

ՇՈՒՇԱՆ:

Գանա քեզ ո՞վ չէ սիրում, վուր նա չսիրի, Նիկոլ ջան:

## ՏԵՍԻԼ ԺԳ.

ՄԵԼՔՕ, ՇՈՒՇԱՆ ԵՒ ՆԻԿՕԼ:

(Այս միջոցին գալիս է մելքոն ձախ կողմից միամիտ, որ



անցնի դէպի աջ, յանկարծ լսումէ սոցա ձայնը, կանգ է առնում, ծածուկ մօտենումէ և ճանաչում Նիկոլին):

ՆԻԿՕԼ:

Հոգի՛ս հատոր, ի՞նչ ես ասում, հա՞ թէ չէ:

ՇՈՒՇԱՆ:

Գանա ես քունը չի՞մ, վունց գուզես արա:

ՄԵԼՔՕ, *ծածուկ հանդիսականաց:*

Ը՜մմ . . . նրանն իմ ու նրանը, վուր ասումէր, ա՜յ թուրմէ ումն է էլի:

ՆԻԿՕԼ, *ուրախացած Շուշանի համաձայնութեան վերայ:*

Իմ աղաւնեակ, իմ վարդ ու մանուշակ, այո՛, ես հաւատումեմ, որ դու արդարև հոգով և մարմնով յանձնուած ես ինձ . . . Ա՜խ . . . ես քեզ համար ամեն դէպքում պատրաստ եմ և մինչև ի մահ պատրաստ:

ՄԵԼՔՕ, *առաջ գալով, ետևից պինդ բռնելով և թափ տալով:*

Ես էլ քեզ համա իմ պատրաստ . . . Դուն էսար ի՞նչ ես շինում, հը՞ (Շուշանը փախչումէ տուն:) Տօ, դուն ո՞վ ես, ասումիմ է՜ . . . Տօ քեզ ո՞վ է էսար համեցէք անում, հը՞ . . . Տօ, քեզ ո՞վ է ասում վուր . . . (Խփումէ:) վուր իմ ախչկան գլխահան անես, հը՞ . . .

## ՏԵՍԻԼ ԺԴ.

ՄԵԼՔՕ ԵՒ ՆԻԿՕԼ:

ՆԻԿՕԼ, *հանդիսականաց:*

*Սիրտս ասումէ վեր կալ տոլան և այնպէս տուր գետնովը, որ բօղքի նման տրաքի:*

ՄԵԼՔՕ, *թափ տալով:*

*Տօ, ի՞նչ ես փնթփնթում, ի՞նչ, մէ բարձր ասա, վուր ես էլ լսիմ է... (Թափ է տալիս:) Տօ, ի՞նչ ես դուն իմ ախչկայ բողազը դուս կալում է: (Խեղդումէ նիկոլին):*

ՆԻԿՕԼ, *հանդիսականաց:*

*Ա՜յ գիտի սէր, այս բոլորը քո հետևանքն են... (Մեղմօրէն) Սպասեցէք պ. Մելքօ, սպասեցէք, ես ձեզ բան ունիմ ասելու:*

ՄԵԼՔՕ, *չարացած:*

*Տօ, ես քու բանը չի՛մ ուզում լսի, (Բռնելով:) դուս ասումիմ էլի:*

ՆԻԿՕԼ:

*Պարոն Մելքօ, կարծեմ ձեր սրտի բարկութիւնը գաղարեցրիք, դէ հիմա ինձ լսեցէք աղաչեմ:*

ՄԵԼՔՕ, *չարացած:*

*Ես վունչէ չեմ ուզում լսի... դուս ասումիմ:*



ՆԻԿՕԼ, *հանդիսականաց:*

*Սորանից լաւ միջոց չկայ, պարզն ասեմ ես սորան, գուցէ մեղքանայ: (Մեղմօրէն:) Ես քո աղջկայ վերայ սիրահարուած եմ, նա էլ ինձ վերայ, եկէք դուք կակղեցէք պ. Մելքօ, և մեր պսակմանը համաձայնեցէք:*

ՄԵԼՔՕ, *աւելի ևս չարացած:*

*Տօ՛, բէհեար նամաղուլ ի՞նչ անում, տօ, դըլըխնիրդ քարումն եք տալի, տօ... տօ...*

*(Իրան գցումէ նիկոլի վերայ, որ ծեծի նորան, բայց նիկոլը այդ նկատելով, իսկոյն սլանումէ դէպի աջ: Մելքօն երեսի վերայ փռվումէ):*

ՆԻԿՕԼ, *փախչելով:*

*Որ տրաքուես՝ ես պիտի առնեմ աղջկանդ, ես:*

## ՏԵՍԻԼ ԺԵ.

ԽՈՐԻՇԱՆ ԵՒ ՄԵԼՔՕ:

ԽՈՐԻՇԱՆ, *աջ կողմից վրայ հասնելով և բարձրացնելով:*

*Վո՛յ մէ, էդ ի՞նչ ես էլի, քա՛, էդ ի՞նչ ես փռուի, վէ՛կաց, վէ՛կաց թէ Աստուած կու սիրիս:*

ՄԵԼՔՕ, *փոշիման վեր է կենում և շորը սրբում:*

*Ա՛յ քա՜նդուի ու բոփշակ լվի ձիր դի՛մացէն, հը՜... Աստըձու կրակը ննգնի ձիր ու-*

սուլի մէջը, հը՜ . . . (Ձեռները երեսին ծածկելով։) Չէ, լաւ է, վուր դուռն ու պատուհանս չփշրուից։ (Նայելով ձեռներին մէջ։) Ձեռներիս մէջը կի երվումէ։

ԽՈՐԻՇԱՆ, զարմացած։

Մ՚է սաս տեսնիմ, էդ ի՞նչ իս էլի, քա՛, էն ո՞ւմ հիդնէլը ղալմաղալ անում։

ՄԵԼՔՕ։

Ո՜ւմ հիդն էի՜ . . . ում հիդը վուր էի, նա թռաւ, սպպից . . . ամա դուն էսօր էսօր ախչկայ մէր իս, բաս չէ՞ ու։

ԽՈՐԻՇԱՆ։

Ախար ի՞նչ է պատահի։

ՄԵԼՔՕ։

Բաս էտէնց իս ախչկանդ պահպանո՞ւմ։

ԽՈՐԻՇԱՆ։

Ախար մէ սաս տեսնիմ, թէ Աստուա՛ծ կուսիրիս է՞։

ՄԵԼՔՕ։

Ի՞նչ ասիմ . . . ուզումիս իմանա՞ . . . ախչիկըդ ու էն շալլատան Նիկօլը, էստի սաս ու բաս էին անում . . . բաս էտէնց իս ախչըկանդ մուղայիթ կենո՞ւմ։



ԽՈՐԻՇԱՆ, զարմացած։

Վո՛յ, քոռանամ իս՝ էլի՜։

ՄԵԼՔՕ, ծաղրելով։

Իս քիդ համա պատրաստ իմ, կօսէ, իմ աղունակ, իմ վարդ ու մանուշակ, կօսէ, էս կապկպածն էլ մէ էն թաւուր խունջիկ մունջիկ էր գալի վուր, վուր էլ չիմ կանա ասի։ (Հեզաբար։) Ամա վուր իս վրայ էկայ ու, իս էլ քիզ համա իմ պատրաստ ասի ու, մէ լաւ եախալամիշ արի ու . . . մէ գայիր էնդի թամաշ անէիր է։

ԽՈՐԻՇԱՆ։

Բաս էդ վո՞նց էլաւ, քա, վուր էստի փրռուեցար։

ՄԵԼՔՕ։

Տօ՛, զուրթ իս չիմ իմանում, թէ դա սատանայ է, թէ կուրդղելի է (Նազարովէ) թէ ինչ է. տաչիկ կանգնած ախդը, էնէնց է (Սրբէ-նաթով այսինքն ճակատով, ցուցամատով եւ միջնամատով թրխկացնելով) դուս թռչում վուր, էնէնց է սըպըռպըում վուր, կօսիս . . . կօսիս . . . չիմ իմանում, թէ ինչի՞ նմանեցնիմ։ Մարթ մէ իմանայ. դըրանց էն ղիմնազումը էտոունք էլ ին սովրեցնում։

ԽՈՐԻՇԱՆ։

Ղուրթ լա՛ւ, էտո՛ւնք թուղ։ Ի՞նչ արիր քօ։

ՄՆԼՔՕ, *աչերը բարձրացնելով.*

Էլ ի՞նչ պիտէի անիր։ Նա սպպից՝ իս էլ փըռուեցի . . .

ԽՈՐԻՇԱՆ։

Իտու համա, չիմ ասում, էտու։

ՄՆԼՔՕ։

Բաս ինչի՞ համա իս ասում։

ԽՈՐԻՇԱՆ։

Նշան տուէքի համա վուր ասումէիր, վունց արի՞ր։

ՄՆԼՔՕ։

Վունց թէ վունց արիր. ամէն բանը իրա կարքով կէհա էլի, չիս իմանում։

ԽՈՐԻՇԱՆ։

Հիմի, ասումիս, էքուց գալիս ի՞ն։

ՄՆԼՔՕ։

Էքուց չէ, էքուց, վա՛։ Առուտէհան քիղ չափի, վուր կիրագի գուքան ու մինք էլ պատրաստութին պիտինք տեսնի՞ . . .



ԽՈՐԻՇԱՆ, *միտը ընկնելով և տխուր։*

Քու ղուրթ է՛։ Ասա՛ էս թաւուր բանն էլ մոքե՛մէն կու գցի՞ն։

ՄՆԼՔՕ։

Էն թաւուր վուր միր գլխիցը իրար կպան հա՛, բաս մոկումը բան կու մնէր։ Իժում վաղուց է մտակը անգածեմէը դուս էկէի։

ԽՈՐԻՇԱՆ, *նեղանալով։*

Դէ լա՛ւ։ Մասխարի վուխտ իս գթի՞։

ՄՆԼՔՕ։

Բաս էն թաւուր վուխտը, էն թաւուր մասխարա կօնի՞ն։

ԽՈՐԻՇԱՆ։

Ի՞նչ վուխտ, ի՞նչ մասխարա։

ՄՆԼՔՕ։

Էն, վուր մութաքէն ջանում նստեցիիր, հա՛։

ԽՈՐԻՇԱՆ, *աչքի եւ նեղացած։*

Էհ է՛ . . . հերիք է քու հօրն օղորմի։ Գուն հէնց մասխարա արա, ամա չիս իմանում թէ սրտեմէս ինչիր է անց կենում։

ՄԵԼՔՕ։

Ի՞նչ է . . . էլի ինչի՞ր է անց կենում։

ԽՈՐԻՇԱՆ։

Վո՜նց թէ ինչի։ Ախար էլի դուն կիրացուայ ցցեցիր, ի՞նչ կուլէր, հէնց էքուց գային ու նշնէին, վուր մէ երկու օր առաջ էս դալմաղալեմէն ու անհամութիններեմէն անդ՞նիրս դնջանար . . . իս վուր խօսումիմ, ասումիս բարբաթեցնումիս։ Արա էս արարմունք է, վուր մեր գլուխն է գալի՞ . . .

ՄԵԼՔՕ, երկարացնելով։

Տօ քու հախն է՜ . . . հալա էդ քիչ է . . . Ա՛յ, տեսնումիս, ինտախտուտուտուտի շնուրքն էլ էս է, ա՜յ։ Իս վուր ասումէի թէ՝ էն քանդուածումը ախչիկ չիմ տայ, էտու համայի ասում, ա՜յ, էտու համա . . . (Ոտները վեր թռչելով։) Ամա քու օխտեմէն ո՞վ կուքէր . . . (Ծաղրելով։) Բանդուրրաշինց թուռը՝ է՛սէնց է խօսում ախրէն, չիմ գիտի. հախնապարենց Օսկնի ախչիկը՝ է՛սէնց շնուրքնիր սովրցաւ, փլան փրատանենց ախչիկը՝ էսէնց էլաւ։ Տօ, վո՞ւր մէկն ասիմ . . . Ամա իս, վուր չէի տալի իմ ախչիկը էն խարարէն, կօսէիր. (Կնոջը ցուցում.) չիս դըշում փուղերդ . . . կռօ իս ուզում մինձացնի



ախչիկդ, չիմ գիտի ինչի՜ր, ինչի՜ր . . . ախար իս վուր մէկն ասիմ է՜։

ԽՈՐԻՇԱՆ, հոգոց հանելով։

Ո՛ւֆ, ճլիք ցցից խատակ . . . (Կամենում է հեռանալ։) Հա՛, մէ գնամ, տեսնիմ ինչ էլաւ։ (Գնում է դէպի աջ։)

## ՏԵՍԻԼ ԺԶ.

ՄԵԼՔՕ, միայն։

Դուն գիտիս։ (Հանդիսատեսին։) Իս էս բանումն էլ սրան չէի լսի, ամա չիմ գիտի՝ թէ էն ի՞նչ չար սատանայ էր, վուր ինձ կակղացրուց ու գլխիս չքիլայ ցցից . . . Տօ, կնի՞կն ինչ, վուր իրա խիլքն ինչ ըլի։ Կնիկը վուր խիլք ունենայ հա՜, վունցոր ասումին, մազերը էնքան երգար կուլի՞ . . . Ա՛յ, տեսնումիք (Ցոյց տալով եւ իւր չերտրշանալով ճակատը իւր մազերը։) Իմ մազերը հէչ չէ բռնվում, էդ էնդուրմէն է, վուր . . . (Հայելու առաջ մօտ է գալիս։) ըհը . . . (Ցոյց տալով։) էստի խիլք կայ, բանականութին կայ, հասկացողութին կայ, խէր ու շառ հասկանալ կայ . . . ա՜յ վունց։ (Նայելով եւ ...) Վա՜, փեթխային պանզակնիրն էլ տուին . . . (Խաղ է անում։) Մութը նկաւ է-

լի՜ . . . պա՛ պա՛ պա՛ պա՛ . . . ես հանդի էլ օ՞ր կու անցկենայ, վուր ես քանի տարուայ օրհնա ի՞ն . . . մարդ չի հասկանում թէ, իմի*) լուսացաւ, իմի մթնից: Է՜հ աշխարքն էլ դառնացաւ: (Նայելով երկնքին:) Վա՜, էփէջայ մթնիլ էլէ, հա: (Աջաքով դողալով:) Ըհը՞, վուտի ձէն է գալի:

## ՏԵՍԻԼ ԺԷ.

ՄԵԼՔՕ ԵՒ ՆԻԿՕԼ:

(Գալիս է ձախ կողմից Նիկօլը Տփխիսու լաւ վաճառականի հագուստով-կապայով և այլն: Նա շատ աշխատել է, որ ամեն կերպով նմանի Կակալուն, որին շատ յաջողած է: Նա պէտք է խաղայ Կակուլու դերը: Մելքօյի հետ խօսելիս, աշխատումէ միշտ հեռու կանգնել, իսկ մօտենալիս կամ ձեռք տալիս, գլուխը կախ գցել):

ՆԻԿՕԼ:

Բարի իրիգուն, պարուն Մելքօ, Կակուլիդ կիրագի իրիգուայ ախըը՝ հիմի է գալի, պարար չո՞ւնի խօմ:

ՄԵԼՔՕ, հանդիսականաց:

Ձէնը փոխուիլ է՞. ամա չէ՞ կուլի անքուն մնացած ըլի: (Նիկօլին:) Ա՛յ, Աստծու բարին

(*) Իմի, [illegible] Երբ, [illegible] և արտասանել Իմի, [illegible] [illegible] և [illegible] համար:



քիդ հիդ, պարուն Կակուլի, դալուստդ բարի ըլի: Համեցէք, համեցէք պէթաղուա:

ՆԻԿՕԼ:

Մադլօբելի՛մար: Ամա գիտիմ, դուն կու արմնաս, կօխի. ես վուխտ իս ի՞նչ բան ունիմ էստի:

ՄԵԼՔՕ:

Չէ, չէ, ինչ արմնալու բա՞ն է, գէնացուալէ, բաս դուն չի՞ս ուզի, վուր մէ քու տունը հանգիպի՞ս:

ՆԻԿՕԼ:

Է՛տէնց չէ, էտէնց: Ա՛յ, ասիմ. ես օր իս Մոսկովէմէն գէպէժ իմ տացի, վուր էսօրւէտ իս Ճանապարհ ննգնիմ, գնամ մէ խիստ թայթի գուրծքի համա:

ՄԵԼՔՕ, անհանգստութեամբ:

Խէ՞ր ըլի:

ՆԻԿՕԼ:

Խէ՛ր է, փառք Աստծու: Էս օր ֆիդ գցեցի գնալը, վուր առուտէհան դուս գնամ: Հիմի իս էկիլ իմ մէն մենակ՝ մէ մատնիք տամ, վուր դուք էլ արխէյին կենաք իս էլ: Ու թէ վուր

Աստուած աջողէց՝ Մոսկովնմէն իմ մագիար թէ նշնի թէ հարսնիքի ամեն պատրաստութիւնը կու բերիմ։ Լաւ չիմ ասում։

ՄԵԼՔՕ, ուրախացած։

Խիստ լաւ ես ասում, հոգուտ մեռնիմ։ Գուգէս հէնց էս նմուշին Շուշանին կանչիմ։

ՆԻԿՕԼ.

Լաւ կուլի։

ՄԵԼՔՕ։

Ամա չէ . . . գնանք տուն, ճրաքը կու փառին, համ մէ լաւ ուրախութիւն կօնինք, համէլ...

ՆԻԿՕԼ, կալնելով խօսքը։

Չէ, չէ, պարոն Մելքօ, էս խիստ իմ շտապում, էքուան պատրաստութիւնը պիտիմ տեսնի ու թայթի գործքիր էլ ունիմ . . . հէնց էստի վերչացրէք, էս վաղն իմ։

ՄԵԼՔՕ, ուրախ։

Դուռն գիգիս (կանչում է) Խօրիշան, Խօրիշան։

ՇՈՒՇԱՆ, կողմի տանից։

Ի՞նչ ես ասում, մամի ջան։



ՄԵԼՔՕ։

Մէ դէղիղ աստ գայ ու շորն էլ մէ չուստ արի էստի։

ՇՈՒՇԱՆ, կողմի տանից։

Էս նմուշիս։

ՆԻԿՕԼ, հանդիսականաց։

Չէ, բանս յաջողում է։ Ինձ չճանաչեց։ Տեսնենք ինչպէս է վերջանում։

ՄԵԼՔՕ, նիկօլին։

Շատ խօմ չէք քրգանից Մոսկովումը։

ՆԻԿՕԼ։

Չէ՛, մէ էրկու շաբաթ։

ՄԵԼՔՕ, ուրախ։

Հա՜, էդ լաւ է։

## ՏԵՍԻԼ ԺԲ.

ՄԵԼՔՕ, ՆԻԿՕԼ, ԵՒ ՇՈՒՇԱՆ։

ՇՈՒՇԱՆ, գալով աջ կողմից և յետ քաշուելով, երբ անծանօթից ամաչեց։

Ի՞նչ ես ուզում, մամի ջան։

ՄԵԼՔՕ, ժպտով։

Էստի արի, հոգուտ մատաղ, ո՞ւր ես քաշ-

վրում, մէ էստի արի: (Ձեռից բռնելով և քաշելով դէպի Նիկօլը: Շուշանը գնում է, ետ չնայելով:) Խորիշան, (կանչում է նրան:) շուտ արա մէ դուն էլ արի. (Նայելով որ,) ի՞նչ էլար, ախար է:

## ՏԵՍԻԼ ԺԹ.

ՄԵԼՔՕ, ՆԻԿՕԼ, ՇՈՒՇԱՆ ԵՒ ԽՈՐԻՇԱՆ:

ԽՈՐԻՇԱՆ, *ներս գալով աջ կողմից տեսնում է, որ Շուշանի ձեռը տալիս է Նիկօլին:*

Էդ ո՞վ է, քա՛, ի՞նչ բանի վրայ իս:

ՄԵԼՔՕ, *ուրախ:*

Խիստ լաւ բանի վրայ իմ, Խորիշան: Միր փեսացունէ է:

ԽՈՐԻՇԱՆ, *նեղացած:*

Քա, ևս էանէնց պիտիմ նշնի իմ ախչիկը՞, գանա շատ ունի՞մ. վունց մարթ կայ, վունց էլ սազանդա՞ր, թէ վուր էտ էր էտ, ի՞նչ կուլէր մէ էրկու սահաթ առաջ ասէիր, վուր մինք միր պատրաստութինը տէսնէինք: Ախար կիլագի էիր ասո՞ւմ . . . (Զարմացած:) փի՞նչ քուսաած մարթ իս, քա:

ՄԵԼՔՕ, *ուրախ:*

Վա՛, հիմի դուն ուրախ չիս, վուր հէնց էսօրէվէտ էլա՞ւ:



ԽՈՐԻՇԱՆ:

Խիստ իմ ուրախ, ամա էսէնց էլ նրշ...

ՄԵԼՔՕ, *խօսքը կտրելով:*

Տօ, մէ ա՛րի, շատ մի խօսա, իժում կօսիմ բանի էութինը: (Նիկօլը ձեռքովն բռնում է Շուշանի ձեռը: Մէկտեղ օրհնում է:) Աստուած շնորհաւոր անէ, մէ բարձի վրայ ծերանաք, հայր Աբրահամի օրհնութինը ձիզմէն անպակաս ըլի, վուրթիքս: (Խորիշանին:) Տօ՛, մէ արի դուն էլ օրհնի է:

ԽՈՐԻՇԱՆ, *որը երեկոյին մթնութիւնից չէր ճանաչել իւր փեսացուին, մօտենում է, նայում է Նիկօլի երեսին և ճանաչում է նորան:*

Քա՛, մաշ կակուլի, կակուլը էիր ասում, էս վո՞ւնց էլաւ, վուր էլի Նիկօլին տուիր: Մարթ քիմէն գլուխ չի հանի:

*(Սկսում է օրհնել երկար ու բարակ ժպիտը երեսին, աչքը գցելով մէկ Նիկօլի, մէկ Շուշանի երեսը: Ուրախ:*

ՄԵԼՔՕ, *վրդովվելով Խորիշանի խօսքից յետոյ:*

Վո՞ւնց թէ Նիկօլը . . . (Մօտենալով և նայելով Նիկօլի երեսին:) Տօ՛, ղուրթ (Գլխին տալով, հառաչելով:) Նիկօլն է: (Շշապելով:) Խորիշան, էլ մի՛ օրհնի, էլ մի՛ օրհնի. սա միզ խայտառակից: Տօ, դո՛ւս ասումիմ է՞, դուն միզ մաս-

խաղալիս անում: (Խփելով:) Քու էրէխէն ո՞վ է, ո՞վ: (Հանդիմանելով) Ն՛մէնց բան կու՞լի, էնէնց էլ բանիք տեսի՞... Թէ մէ էրկու էլ վրայ տամ, մէ էն Թաւուր բան կոնէ, վուր էս անգամ դունչ ու պռունկս ու՛ վուտ ու գլուխս ջարդ ու փշուր կոնէ: Ա՜յ Թուրմէ ինչի համա չէկաւ տուն... (Ծոցը բերելով) Թայթի գուրծքիր ունիմ, կօսէ: (Նեղանալով:) Դուն հալա էատի իս, դուս առուրիմ էլի... (կամենում է յարձակուել վերան, բայց մտաբերելով նորա արածները, իրեն ետ հում է և յետ ու յետ է քաշվում:) Վա՜...

ՆԻԿՈԼ, նկատելով, որ ամենայն ինչ պարզուեց սաստիկ հանդարտ և վճռողաբար:

Տե՛սնումէ՞ք, պ. Մելքօ. Աստուած էլ կամեցաւ, որ մենք ձեր օրհնանքը լսենք, էլ մի՛ հակառակուէք. առաջէ՞ք Աստուած եղածն օրհնի:

ՄԵԼՔՕ, չարացած և յետ քաշուելով, որ մի գուցէ գլուխը էլ օյին հանի:

Տօ՛, էնէ վուր Աստու կամքով չիս ժաժ գալի է՜... Ախար սատանի օյիննիր իս հանում իմ գլուխը:

ՆԻԿՈԼ:

Պարոն Մելքօ, Աստուծոյ կամքով էլ ժաժ եկայ, բայց դարձեալ դուք ձեր աստծն արիք է՛:



ՇՈՒՇԱՆ, լացակումած:

Մամի ջան, քիզ դրուստը կօսիմ. էլ իս ուրիշ օմքնի չիմ տայ իմ ձեռս՝ Թէ վուր պոռիս էլ իս ինձ կու գեղլիմ ու ուրիշի չիմ գնա:

ԽՈՐԻՇԱՆ:

Վո՛յ քոռանամ իս, էտ ղալա էլ համարձակութի՞ն:

ՄԵԼՔՕ, շուշանին:

Տօ, տօ, ձէնտ կտրի է: (Նիկօլին) Էլի դուն էատի իս, դուս է՜:

ՆԻԿՈԼ:

Ես հէնց այստեղ ինձ կմահացնեմ և դուս չեմ գնալ: (Ցոյց տալով Ըշխեի մէջ փաթաթած մի բան:) Ա՜յ, գեղը:

ՄԵԼՔՕ:

Ջահանդամը քու գլուխը, վուր կու գեղլիս: Մէ շանով պակաս կուլի քաղաքը:

ՇՈՒՇԱՆ, վճռողաբար:

Իս էլ ինձ կու գեղլիմ ու մահապարտը դուն կուլիս:

ՄԵԼՔՕ, չարացած վերջին աստիճանի:

Դուն էլ կու գեղլի՞ս, հա՜... Թէ վուր

Է՞տէնց է, դո՛ւն էլ դո՛ւս իլ էնդանցորէն։ Դո՛ւն էլ իմ աղջիկը չես, դո՛ւս։

(Նիկօլը Շուշանին գլխով է անում)։

ՇՈՒՇԱՆ, վճռողաբար։

Գուզիս դուս կեհամ։

ՆԻԿՕԼ, Շուշանին։

Արի գնանք, Շուշան, տեսնումես դուս է անում։ Գնանք, մենք մեր գլխի անելիքը անենք։ (Կամենում են գնալ։)

ԽՈՐԻՇԱՆ, չարացած, Մելքօյին շտապաւ ասում է։

Ո՞ւր ես թողնում տանի, քա՛, միղ խայտառակիլու միաք խոմ չունիս։ Կեհան ժամումը կուսպսակուլին ու իժում։ Ուզումիս մի մատ միզը ըլինք խալխումը՞։ Ախպար, հէնց խելքիդ զօխ տալի է։

ՄԵԼՔՕ, Նիկօլին։

Տօ, ո՞ւր ես տանում իմ աղջիկը։ (Բռնելով։) Դո՛ւս ասումիմ է՜ . . . շատ պիտիմ կրկնի՞ . . . (Շատ չարացած) է է է՜ . . . ես քու գլուխը չունիմ։ Խորիշան, մէ գնա էն ջոխին բեր, իժում իս գլխիմ ու սաս։

(Նիկօլը և Շուշանը մի բան են հանում գրպաններից և գցում բերաննեըը։ Այս Խորիշանը նկատում է։ Մելքօն չարացած ման է գալիս)։



ԽՈՐԻՇԱՆ, սրտապատառ։

Վ՛ո՜յ, քոռանամ ու կուրանամ ես. (Մեկուսի։) գլիղը կերան քա՛։ Մէ հասի թամաշ. ամօդ-ռանցնիրը կնաց։ Ճար ունիս, ճար տուր։

ՄԵԼՔՕ, անհոգութեամբ։

Տօ, մէ էն ջօխին գնա բեր, ես գիտիմ սրանք, ինձ Մելքոմ կօսին։ Ինձ էդ թաւուր բանիրով չեն կանա վախեցնի։

ԽՈՐԻՇԱՆ։

Վ՛ո՜յ, վո՜յ . . . գետինը պատռվի ու ինձ դէվէր տանէ, վուր ես էս թաւուր բանիր տեսնիմ վուշ։ (Վազելով դուրս)։

## ՏԵՍԻԼ Ի.

ՆՈՅՆ ԱՌԱՆՑ ԽՈՐԻՇԱՆԻ։

ՄԵԼՔՕ, կակղած։

Տօ՜, ղուրթ էրկու էրկու մէղնուեցան . . . չըլի ղուրթ դեղ էր՝ վուր կերան . . . էս ի՞նչ էր, վուր էկաւ գլուխըս։ (Նայելով նոցա վերայ։) Վ՛ո մէ՛, վոյ մէ՛, տես վունց են չալէշ գալի է... (Գլխին տալով։) Վ՛ա՜յ գլխիս, էս ի՞նչ օյին էր։ (Հառաչելով։) Ախչկեմէս զըկուիլը մէկուռ, էս սուդէքանց մէջն ու սիրտս գնալն էլ մէ կողմ...

(Գնում է Շուշանի մօտ։) Շուշան, Շուշան, (Նեղացած) Նիկոլ... վայ մէ՛, աչքերը ուղղումին կողպին։ (Լացակումած։) Շուշան ջան, Շուշան, մի՛ կաց, վուրթի... քու քեռին ըլի, վուրթի... էս օրվայ համա՞ր էս քեզ ինախնամուտուտուտումը տուլ... (Գլխին տալով։) Վա՜յ գլխիս... (Կանչելով։) Խորիշան, (Համբերատարութեամբ։) Նա էլ չըկայ։ Տօ, էս ի՞նչ, դալաթ էր, վուր արի... (Այս կողմ այն կողմ։) Տօ, մէ ջուր բերէք, ջուր հա... (Համբերատարութեամբ) վուչ, վուք չկայ... Մէ վազիմ մի դոխտուրին կանչիմ։

(Մելքօն վազում է ձախ։ Խորիշանն էլ վազելով գալիս է նոյն կողմից։ Շատ վատ կպչումին իրար։)

## ՏԵՍԻԼ ԻԱ.

ՆՈՅՆՔ ԵՒ ԽՈՐԻՇԱՆ։

ՄԵԼՔՕ ԵՒ ԽՈՐԻՇԱՆ։

Վա՜յ մէ՛...

ՄԵԼՔՕ, սիրտը բռնելով, շտապաւ։

Ո՛ւֆ... Տօ ի՞նչ էլար, ո՞ւր գնացիր։ Դու գնա մէ չուտ ջուր հասցրու, երեսներին տձա, ես էլ մէ դոխտուրին հասցնիմ։

ԽՈՐԻՇԱՆ, իսկոյն։

Ես գնացի մօտը։ Դոխտուրը գալիս է, մի



գնա։ Արի մէ ճար անինք։

ՄԵԼՔՕ, յետ դառնալով, լացակումած։

Էլ ի՞նչ ճար. աչքերը կողպեցին ու բերանները բաց ու խուփ են անում։

ԽՈՐԻՇԱՆ, վազելով և ծնկան իջնելով։

Շուշան, (Զգուշացմա՛ն տալով։) Շուշան ջան, Շուշան, մէ աչքերդ բաց արա, վուրթի ջան, գէնացուալս դէդէն։

(Մելքօն և արտասուքը աչքերին մօտենալով նոցա, նայում է անդադար Շուշանի երեսին և ժամանակ առ ժամանակ Նիկոլին և նոցա ամէն մի շարժմանց համար, իսկ ծնկան և գլխին է խփում։ Բժշկի գալը չեն նկատում)։

## ՏԵՍԻԼ ԻԲ.

ՄԵԼՔՕ, ԽՈՐԻՇԱՆ, ՆԻԿՈԼ, ՇՈՒՇԱՆ ԵՒ ԲԺԻՇԿ։

ԲԺԻՇԿ, գալիս է ձախ կողմից և նայելով վայր ընկածներին, ասում է հանդիսականաց։

Ի՜նչ արհեստութեամբ խաղացել են իւրեանց դերերը և ինչպէս յիմարացրել այս երկու պառաւներին... (Մէջքոյ։) իսկ ես ի՞նչ անեմ հիմայ... ես ի՞նչպէս կատարեմ Նիկոլայի խնդիրը, որ բոլորովին հակառակ է բժիշկ կոչմանս... բայց պէտք է ասել, որ, եթէ ես այս երկու սիրահարին իւրեանց ցանկալի նպատակին չհասցնեմ, անշուշտ պէտք է իրագործուի

այս կատակը, ինչպէս քանիցս կրկնեց Նիկօլայը . . . և այն ժամանակ ես էլ մասամբ պիտի լինիմ սորա մահուան պատճառը . . . այո, սորա կեանքը և մահը կախուած է ինձանից . . . արդեօք ազատեմ սորա, թէ հեռանեմ կողմանս . . . բայց չէ՛, հարկաւոր է ազատել այս երկու հոգուն՝ ապագայի մահուան սպառնալիքներից, այս երկու հոգուն, որք պիտի ի զուր տեղը՝ ծնողի կամապաշտութիւնից ստիպուած, զոհ լինին մի ամենագեղեցիկ զգացմունքի — սիրոյ համար: . . . Չէ, չէ, անշուշտ հարկաւոր է օգնել: Ուրեմն առանց միջոց կորցնելու ես էլ խաղամ իմ դերս:

(Այս միջոցին Մելքոն նկատում է բժշկին, լացակումած և ձեռքը պարզած աղաչելով ասում է):

ՄԵԼՔՈ:

Ա՜խ գէթաղուա, դոխտուր ջան, մէ՛, հասի է՜:

ԲԺԻՇԿ, իբր չիմանալով:

Ո՞ւր են, ո՞րտեղ են . . . (Ետ-ետ քաշուելով և շփոթուելով:) Այս ի՞նչ է՝ պ. Մելքօ, այս ի՞նչ անդն էք հասցրել . . . մի՞թէ այս բան է, որ դուք էք արել: Հիմա դուք պատասխանատու կլինէ՞ք մայրոց, դատաստանի և



Աստուծոյ առաջ (Բռնելով երկուսի պարանոցներից:)
Ա՜խ, սիրահարութիւն, սիրահարութիւն, քանի՛ քանի՛ այսպիսի զոհեր ես արել . . . (Թողնում պարանոցները և վեր կենալով:) բանը բանից անց է կացել . . . պէտք է Պօլիցիային յայտնել:

ԽՈՐԻՇԱՆ, վեր թռչելով և լացով:

Վա՜յ քոռանամ ես . . . (Համբուրելով Շուշանին:) Շուշան ջան, գէթաղուա, Շուշան (Բժշկին:) Ամա, դոխտուր ջան, էրեսը սուք է:

ՄԵԼՔՕ, չոքելով բժշկի առաջ:

Դօխտուր ջան, էլ փուղ չիմ խնայի, ճար ունիս ճար արա:

ԲԺԻՇԿ, սառնութեամբ:

Ի հարկ է նոր ոչինչ չէք խնայիլ, բայց էլ ի՞նչ ճար:

(Անցնում է մի միջոց: Խորիշանը գլուխը դրած Շուշանի գլխին, աղիողորմ լալիս է, իսկ Մելքոն չոքած բժշկի առաջ, նայում է երեսին, սպասելով նորա վերջնական պատասխանին):

ԲԺԻՇԿ:

Բայց մի՛ բան կայ. եթէ խոստանաք, որ անպատճառ ձեր աղջկան տաք սորան, (Ցոյց տալով Նիկօլին) ես սոցա կլուացնեմ: Ես ձեզնից փող չեմ ուզում, միայն իմ ուզելիքս այս է:

ԽՈՐԻՇԱՆ ԵՒ ՄԵԼՔՕ, *տեղից վեր թռչելով և մի փոքր սիրտ առած:*

*Ղո՞ւրթ:*

ԲԺԻՇԿ:

*Ուղիղն եմ ասում . . . ես ձեզ խօսք եմ տալիս:*

ՄԵԼՔՕ, *շտապաւ:*

*Տուեցի ու տուեցի դոխտուր ջան, ամա մէ քիչ չուստ արա, հոգուտ մատաղ: (փողը մի ու-տանքին նշանակ-ը տալով): Փուղ էլ չեմ խնայի, դոխտուր ջան:*

ԲԺԻՇԿ:

*Ես փող չեմ ուզում, փող. բայց ինձ շատ է թուելի, որ այս տեսակ ջահէլները, սիրոյ համար գոհ են լինում:*

ՄԵԼՔՕ, *շտապաւ:*

*Դուն գիտես, դոխտուր ջան, ամա իս իմ շնորհակալութինը չեմ մոռանա:*

ԽՈՐԻՇԱՆ:

*Դոխտուր ջան, իս էլ իմ ձեռնեմէն էկած շնորհակալութինը կօնիմ, ամա չուստ արա:*



*(Շուշանին) Վուտիդ տակին մեռնի ղէղէն, Շուշան ջան:*

ԲԺԻՇԿ:

*Բայց ես կասկածումեմ պ. Մելքօ, որ ձեր խօսքին տէր չլինէք:*

ՄԵԼՔՕ, *աղաչանաց ձևով:*

*Քու արևն ու իմ արևը գիտենա, Աստուծ թուղ ըլի վկայ, դուն վկայ, իմ վուրթկերանց արևը վկայ, էս օրուայ օրը վկայ, էրէկուայ անմահ պատ. ար . . .*

ԲԺԻՇԿ, *դադարեցնելով:*

*Լաւ, լաւ, հաւատացի, բայց իմացէք և այս, որ սոցա լաւացնելուց յետոյ, եթէ չկատարէք ձեր խոստումը՝ իմացէք, որ այս միւնոյնը կկրկնուի, բայց այն ժամանակ էլ փրկել չի լինիլ, թէկուզ աշխարքի բոլոր բժիշկներին կանչէք: Ահա ես իմ պարտքից պրծնումեմ: Այս բոլորը ոչ այլ ինչ է, եթէ ոչ՝ մի պարզ օրինակ ձեր ապագայի համար:*

ԽՈՐԻՇԱՆ, *լացով:*

*Դոխտուր ջան, վուտիդ տակին մեռնիմ, չուստ արա. բանը բանեմէն անց կուկենայ:*

ԲԺԻՇԿ, խորհելով:

Այս բոլէնս, տէրիս: (Մելքոյին:) Հիմա ինչ՞ էք ասում. այլ ևս հակառակութիւն էք թէ ոչ:

ՄԵԼՔՕ:

Դոխտուր ջան, էլ իս ղալաթ կոնիմ, գլուխս մինձ քաշովը կուտամ . . .

ԲԺԻՇԿ:

Ուրեմն հաստատ տէ՞ր էք ձեր խօսքին:

ՄԵԼՔՕ, շտապով:

Հաստատ, հաստատ:

ԲԺԻՇԿ, ձեռք մեկնելով:

Դէ տուեցէք ձեր ձեռը:

ՄԵԼՔՕ, իբր կամենալով մտնել նորա սրտի մէջ:

Իս փուտում ու գլխով քիզ, դոխտուր ջան, մէ չուստ արա, գէլթաղուա, փուխոը անց է կենում:

ԲԺԻՇԿ, չթողնելով իրան կպչել:

Հաւատացի հիմա, հաւատացի: (Դառնալով դէպի ընկերներին:) Նիկոլ, Շուշան, վեր կացէք:

(Նիկոլը և Շուշանը ծիծաղելով և ուրախ վեր են թռչում կանգնում: Մելքօն և խորիշանը զարմացած և մի զաղ բերանները բաց ու ձեռները չռած, մնում են անշարժ կանգնած: ՏԵՍԱՐԱՆ: Յետոյ գլխի են ընկնում, որ այս բոլորը շինծու է եղել և ոչ իսկապէս: Խորիշանը միւսների հետ ծիծաղում է):



ԲԺԻՇԿ, ծիծաղելով:

Այս անգամ Աստուած շնորհաւոր անի, ինձ էլ քաւոր անի:

ՄԵԼՔՕ, որը, որպէս խաբուած չէր մասնակցում նոցա ծիծաղին, կինը քորելով ասում է:

Ախար իս գիտիմ է՞: Ախ ինսախոխտուսուտուտ . . . ախ ղի՛մնըխ . . . (Ուսերը վեր թռցնելով, հառաչելով:) Էլ չմ՛րէս ինչ:

Վարագոյրը իջնում է:

## ԿԱՐԵՒՈՐ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ ՍԽԱԼՆԵՐԻ։

| ԵՐԵՍ։ | ՏՈՂ։ | ՍԽԱԼ։ | ՈՒՂԻՂ։ |
|---|---|---|---|
| 11 | 11 | Դէղլին | դէղէն |
| 15 | 17 | աշխատել, Թափել, | աշխատի, Թափի |
| 26,27,28,9,19,4, | | ապպել | ծապպել |
| 30 | 15 | համայի | համա էի |
| 37 | 18 | ...մէկ Շուշանի երե-<br>սը։ Ոսկան։ | 13 . . . համաչուալ նա-<br>րան։ Ուրախ։ |
| 49 | 10 | գիմնգիա | գիմնազիա։ |
| | | Տպած է մի քանի օրինակաց մէջ։ | |
| 17 | 2 | հիչ | հէչ։ |

ԳԻՆՆ Է 35 ԿՈՊ.

Օտարաքաղաքացի ցանկացողները թող բարեհաճեն դիմել մեզ հետևեալ հասցէի.

ВЪ г. ЭРИВАНЬ.

Эмину Іакимовичу Теръ-Григорьянцу.

18372

2013